

ՀԱՄԱԶԱՆԴՈՒԹԻՒՄ

Մարդիկ այն գործողությունները, որոնք պիտի ընէին եւ չկատարուելու պարագային որեւէ տեսակի պատճառաբանութեամբ կարող են իրենք զիրենք անմեղադրելի ներկայացնել: Մակայն անկարելի է, որ անոնք անմեղադրելի մնան, եթէ անհնազանդ գտնուին անոնց, որոնց աստուածային կամ մարդկային օրէնքով պարտաւոր են հնազանդիլ: Ուստի անոնք պարտաւոր են պատասպարուելու հնազանդութեան զրօշին տակ: Իսկ ով որ կ'ըմբոստանայ՝ արժանի է պատիժի, որովհետեւ գրուած է «Անհնազանդ որդին կորստեան պիտի մատնուի» (Առակ. ԺԳ. ---):

Ոչ ոք ինքնուրոյն ընդունակ չէ կեանքի ընթացքին անվրէպ ընթանալու առանց առաջնորդի: Քանզի ով որ անծանօթ ճամբաներով կ'երթայ, ուղին ցոյց տուողի մը կարիքը ունի: Մարդիկ երբ աշխարհ կու գան այս կեանքի ճանապարհին անծանօթ կ'ըլլան, ուստի անոնք կարիք ունին իրենց կեանքին անցնելիք ուղիղ ճանապարհները ուրիշներէն սորվելու, որպէսզի մարդիկ կենցաղավարութեան ուղիղ պողոտայէն դէպի չար գործեր ու կիրքեր չխռովին: Այս տեղի կու տայ գիտակներուն հնազանդելով, վասնզի ան չի գիտեր դէպի որ կողմը երթայ, ուրիշներէն պիտի սորվի որպէսզի կարողանայ տեղ հասնիլ: Եթէ մարդը հմուտներու կողմէ չկրթուի խօսքերու, գործերու, վարքի եւ զիտելիքներու մէջ, անբան արարածներէն ալ անարգ կ'ըլլայ...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՊԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԱՆՔՆԵՐ

Կախարդութեան հետեւանքները կրնան այլազան ըլլալ: Ստորեւ կ'ուզեմ ընթերցողին տեղեկացնել, թէ ինչ կ'ըսեն անոնցմով անձամբ զբաղողները:


ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Անձ մը հետեւեալ վկայութիւնը կու տայ ըսելով. «Քսան տարի առաջ ծանրօրէն հիւանդացայ եւ ինծի խորհուրդ տուին հմայողին դիմել: Այդպէս ալ ըրի: Եւ հիմա կը զգամ, որ Աստուծոյ առջեւ աղօթած ատեն ատիկա խոչընդոտ կը դառնայ իմ դիմաց: Աղօթած ատենս յաճախ այն մտածումը կը համակէ զիս՝ որ չ'արժեր աղօթել, օգուտ պիտի չունենայ: Յաճախ զիս կը տանջեն նաեւ սրբապիղծ մտածումները»:

ԱՌԱԿՆԵՐ

Եթէ այսպէս քիչ մը քննաս, քիչ մը հանգչիս, քիչ մը մրափես, քիչ մը ձեռքերդ կուրծքիդ ծալլած մնաս, ահա այն ատեն աղքատութիւնը չար ուղեւորի մը նման քեզ պիտի դիմաւորէ եւ չքաւորութիւնը ժիր սուրհանդակի մը նման դրանդ առջեւ պիտի կանգնի:

Բայց եթէ դուն եւս աշխատասէր ըլլաս, ամառդ աղբիւրի նման քեզ պիտի ողջունէ եւ չքաւորութիւնը չար մարդու մը պէս ինքզինք պիտի հալածէ: (Առակ 6.10-11)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 27 ՄԱՅԻՍ, 2012

ԹԻՒ 22

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻՄ 14.25-31

ՀՈԳԵԳՎԱՈՒՄՍ (ՊԵՆՏԷԿՈՍՏԷ)

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է՝ որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք: Լսեցէ՛ք ինչ որ ըսի ձեզի, թէ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինծի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն:

Սիրելի Քրիստոսը ու պահել Անոր պատուիրանները երկու անբաժան ճշմարտութիւններ են մեր քրիստոնէական կեանքին մէջ: Եթէ կը սիրենք Յիսուս, անպայման կը հաւատանք Անոր Խօսքին ու հաւատարիմ կը մնանք անոր հոգիին: Երբեմն ալ, լսել Խօսքը, ճաշակել գայն, խորհրդածել անոր մասին՝ մեզ անպայման կ'առաջնորդէ սիրելու Քրիստոսը: Քրիստոսը կը սիրենք այն ատեն երբ մենք կը սկսինք ընդունիլ մեր նմանը իբրեւ եղբայր՝ իբրեւ սիրելի, այլ խօսքով երբ մեր նմանը սիրենք եւ սրտանց օգտակար դառնանք անոր՝ այն ատեն ճշմարտապէս սիրած կ'ըլլանք մեր երկնաւոր Հօր: Բոլորս ալ խաղաղութիւնը սիրող ենք եւ խաղաղութիւն կ'ուզենք: Այդ խաղաղութիւնը Քրիստոս նախքան երկինք համբառնալը թողուց ձեզի: Կը մնայ մեր հաւատքով եւ Քրիստոսի ապաւինելով գտնել այդ խաղաղութիւնը մեր առաքելութեան ընդմէջէն:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ



Քրիստոսի Յարութենէն 50 օր ետք, երբ Երուսաղէմի մէջ մեծ թիւով ժողովուրդ հաւաքուած էր Պենտէկոստէի առթիւ, առաքեալները Տիրոջ պատուէրին համաձայն Վերնատուն հաւաքուեցան: Անոնք մէկ սիրտ դարձած կ'աղօթէին սպասելով Ս. Հոգիին գալուստը, ինչպէս Յիսուս խոստացած էր: Յանկարծ սաստիկ հովի ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Ս. Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Առաքեալները գորանալով սկսան քարոզել ու վկայել Յիսուսի մասին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք Երուսաղէմ հաւաքուած էին անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին, թէ ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Պետրոս առաքեալի քառէն ետք 3000 հոգի դարձի եկան եւ մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով:

ՀԱՐՑՈՒՄ- ՊԱՏՄԱՍԽԱՆ

Ինչո՞ւ համար մեր եկեղեցիներուն խորանները արեւելեան կողմը շինուած են եւ հաւատացեալներ աղօթելու ատեն արեւելք կը դառնան:

Արեւելքը խորհրդանշել է Աստուծոյ գահին լուսեղէն յարկին, որուն համար սաղմոսերգուն կ'ըսէ. «Ճանապարհ ըրէք անոր՝ որ երկինքէ երկինք արեւելքի կողմը կը նստի»: Արդարութեան արեգակը՝ Քրիստոս ծագեցաւ արեւելքէն եւ իջաւ երկիր լուսաւորելու համար մեղքի խաւարով պատած աշխարհը: **Արեւելքը փոխաբերաբար հոմանիշ դարձած է երկինքին՝ Աստուծոյ գահուն:** Այս իմաստով Յիսուս իր երկրորդ գալուստն ալ նմանցուցած է արեւելքէն ելլող ու մինչեւ արեւմուտք երեւցող փայլակին: **Ուստի աղօթելու ատեն արեւելք դառնալը նշան է Արդարութեան Արեգակին՝ Յիսուս Քրիստոսի դէմ յանդիման կենալու, անոր լոյսը ըմբռնելու եւ սպասելու անոր երկրորդ գալուստին:**

ԱՌԱՎՆԵՐ
Գլուխ Բ. 1-2
Որդեա՛կ, եթէ իմ պատուիրաններս հոգւոյդ մէջ պահես եւ գործադրես վանոնք՝ ունկնդիր պիտի դառնաս իմաստութեան, սիրտդ գիտութեամբ պիտի հարուստացնես եւ վանոնք որպէս խրատ՝ աւանդես վաւկիրդ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ

Նուէրներու, Պատարագի եւ ողորմութիւն ընելու մասին

Աղքատներուն ընդունելութիւնը ընելը այսօր սօցտակար է ու անոնց աղօթքները Աստուծոյ մօտ են. «Երանելի է ան, որ կը խորհի աղքատին եւ չքաւորին մասին, Տէրը չար օրէն կը փրկէ զայն, երանելի կ'ընէ երկրի վրայ եւ թշնամիներուն ձեռքը չի մատներ զայն»: (Սաղմոս 41:1-3): Կարիքաւորները կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ ունեւորները խնճոքի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ ատոր օգուտը. անօթիներուն համար եղած ընդունելութիւնը օգտակար է, իսկ կուշտերուն համար եղածը՝ ոչ: Քրիստոս չըսաւ. «Յագեցածները կը շտապուցիք» ու նաեւ չըսաւ «Խմելիք տուիք անոնց, որոնք զինով էին», այլ ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ դուք անոնց ջուր տուիք խմելու տեսաք մերկերը ու գանոնք հագցուցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ երանութեան եւ ոչ թէ կուշտերուն եւ ունեւորներուն համար եղած կերուխումները, որովհետեւ ան որ աղքատը, կարօտեալը, օտարը, հիւանդը եւ անտունը կը կերակրէ, ոչ թէ մարդ մը, այլ Քրիստոսն է որ կ'ընդունի, Քրիստոսն է որ կը սփռուի, Քրիստոսն է որ կը մխիթարէ, Քրիստոսն է որ կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է որ կը ծառայէ, քանզի անսուտ է Տէրունի խօսքը:

ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ԱՄԵՆ ՕՐ ՄԱՅ, ԱՄԵՆ ՕՐ ԿԵԱՆՔ

Գոհունակութեամբ ընդունէ՛ ներքին կամ արտաքին որեւէ տագնապ, որեւէ յուսախաբուութիւն, ցաւ, դժուարութիւն, փորձութիւն եւ մթուածներ որպէս ճշմարիտ եւ օրհնեալ առիթ անձիդ մեռնելու եւ լման բաժնեկից ըլլալու քու անձնուրաց Փրկչիդ մահուանը եւ յարութեանը: Լաւագոյն վիճակը այն է որ քու մէջ կը մշակէ ազնուագոյն հաւատքը եւ լաւագոյն նուիրումը Աստուծոյ:

Թաղուիլ անոր հետ մեր ապականած անձովը, հին սովորութիւններով եւ հին բնութիւնովը, եւ յարութիւն առնել նոր կեանքով, Անոր կեանքով: Նոր տեսութեամբ, նոր համոզումներով նոր ու գերազանց նըպատակի մը համար: Ասիկա կ'ընդունինք որպէս կատարուած իրողութիւն, սակայն յաճախ միտք բերելու ենք նորոգուած յիշողութիւնով եւ նորոգուած կեանքով, սեպելու մեր անձերը մեղքին մեռած եւ յարութիւն առած արդարութեան համար: Չայս կրկնելու ենք ամէն օր եւ քանի անգամ որ օրուան ընթացքին մեզի կը ներկայանայ առիթը: Ասիկա մեր անձերը աստուածապաշտութեան վարժեցնել է: Ասիկա հոգեւոր օրէնք է: Մենք հաստատ որոշած ենք մեր հին կեանքին չնայիլ, այլ Անոր յարութեան ուժովը զօրացած հետեւիլ Անոր, ուր որ Ան կ'ուզէ տանիլ մեզ:

Անոր հետ մեռած ենք եւ Անոր հետ՝ կենդանի:
Ամէն օր մահ եւ ամէն օր կեանք:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

2.1-21

Երբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հոփի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ինչպէս անոնք իրենց մէջ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փոլիզիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրետացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»:

Ապշահար, անոնք զարմանքով կը հարցնէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ. «Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովէլի մարգարէութեան որ կ'ըսէ. "Այնուհետեւ երբ վերջին օրերը գան,- կ'ըսէ Աստուած,- իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երագներ պիտի տեսնեն:

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուս եւ աղախիներուս վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծուխով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի, եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ ասէղ օրը:

ՀԱՐՈՒՆԱԿԵԼ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՄՆԸ: ՄԻՇՏ

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՄՆԸ ԿԱՐԴԱՆՔ: